Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության (Acted) Հայաստանյան մ/ճ առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպություն

Ք. Երևան 24.11.2025թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանին

Հարգելի՛ պարոն Պապոյան,

Acted-ը միջազգային հասարակական կազմակերպություն է, որը գործում է ավելի քան 40 երկրներում՝ նպատակ ունենալով ապահովել արտակարգ իրավիճակներում արագ արձագանք և առաջարկել ու իրականացնել երկարաժամկետ զարգացման լուծումներ: Հայաստանում մենք գործում ենք հինգ տարի՝ իրականացնելով ծրագրեր տնտեսական զարգացման, կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաև աղետների ռիսկերի կառավարման ոլորտներում: Մեր առաքելությունն է խթանել դիմադրողականություն, նվազեցնել աղքատությունը և ապահովել ներառական ու կայուն զարգացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարգինալացված համայնքների բնակիչների կյանքի բարելավմանը: Ստորև ներկայացնում եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կից խորհրդին անդամակցելու համար անհրաժեշտ տվյալները.

- **Կազմակերպության անվանումը** - Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության (Acted) Հայաստանյան մ/ճ առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպություն (ՀՎՀՀ – 02834561)
- **Գործունեության հասցե** - ՀՀ, ք. Երևան, Տպագրիչներ 3, բն. 3:
- **Գործունեության համայնք/մարզ** – ՀՀ բոլոր մարզեր
- **Գործունեության ոլորտ, այլ տեղեկություններ** - Տնտեսական զարգացում, կլիմայի փոփոխություն և շրջակա միջավայրի պաշտպանություն, աղետների ռիսկերի կառավարման ոլորտներում, արտակարգ իրավիճակներում արձագանք

Կանխավ շնորհակալ եմ անդամակցության հաստատման համար:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Պասկալ Նոել Բեռնար

Կատարող՝ փոխնախագահ՝ Մարիա Հարությունյան
Հեռ.՝ (+374 33) 007 130; Էլ. հասցե՝ maria.harutyunyan@acted.org